ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 164-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 23-ի «Ռազմական դրության ժամանակ մարտական գործողությունների ընթացքում զինված ուժերի և այլ զորքերի բուժսպասարկման համար անհրաժեշտ լրացուցիչ մահճակալների ապահովման զորահավաքային առաջադրանքները հաստատելու մասին» N 336-ԿԳ որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 29-ի «Ռազմական դրության պայմաններում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգի զորահավաքային նախապատրաստության կարգը, զորահավաքային ժամանակաշրջանում զինված ուժերի և այլ զորքերի բժշկական ապահովման հատուկ կազմավորումների գործունեության կարգն ու առողջապահության ոլորտի զորահավաքային նախապատրաստության հրահանգը հաստատելու մասին» N 1175-ԿԳ որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 5-ի «Թիկունքային հոսպիտալների կազմավորման և զորահավաքային ժամանակաշրջանում թիկունքային հոսպիտալների ծավալման համար նախատեսված կառույցների հատկացման, հարմարեցման ու կահավորման կարգերը հաստատելու մասին» N 100-ԿԳ որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 11-ի «Զորահավաքային պետական պահուստի բժշկական և սանիտարատնտեսական նյութական արժեքների կուտակման (յուրաքանչյուր 100 մահճակալի համար) նորմաները հաստատելու մասին» N 287-ՆԳ որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ